ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/52

ք. Երևան

«19» նոյեմբեր 2021թ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն) համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3700000 (երեք միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք.Երևան,Դավթաշեն 4-րդ թաղ., 32շ., 45բն.
Կառավարական տուն 2,	« ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 220563332059000
գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00149653
Հ/Հ 900011031813	
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Է.Դավթյան
---------- **Վ. Գասպարյան**	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ.Տ.
Կ.Տ.	

Հավելված N 1
«19» նոյեմբեր 2021թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/52 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գինը /հազ.դրամ/	Մատուցման	
							հասցեն	ժամկետը*
1	71241200/15	նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	Նախատեսվում է իրականացնել ներքոնշյալ կրթական օբյեկտների հիմնանորոգման և բարելավման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն ներքոնշված նկարագրի	դրամ	1	3700,0	Ըստ օբյեկտների	Պայմայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում
			«Գյումրու թիվ 29 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մանուշյան 7	
			«Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Արամ Խաչատրյան 27	
			«Գյումրու թիվ 15 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Եսայանի 34/1	
			«Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 13	
			«Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Երևանյան խճ. 91	
			«Գյումրու թիվ 18 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Լազոյի 2	
			«Գյումրու թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գարեգին Ա 6ա	

			«Գյումրու թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Լիսինյան 6	
			«Գյումրու թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Կամոյի 173	
			«Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ե. Չարենցի 4	
			«Գյումրու թիվ 38 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Բուլվարային 7	
			«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շչեդրինի 7	
			«Մարալիկի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան փողոց, 6 նրբանցք, շենք 5	
			«Շիրակավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, գ. Շիրակավան	
			«Բավրայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, գ. Բավրա	
			«Լեռնակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, գ. Լեռնակերտ	
			«Բյուրակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, գ. Բյուրական	
			«Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Ախուրյան, Ախուրյանի խճ. 55	
			«Կամոյի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, գ. Կամո	
			«Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, գ. Վահրամաբերդ	
			«Արթիկի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ				ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Սասունցի Դավիթ 1	

Ձեռքբերվող ծառայության նկարագիր	
Ծառայության անվանումը	Կատարման ենթակա ծառայությունների համառոտ բնութագիրը
Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում	Վերոնշյալ կրթական օբյեկտներում նախատեսվում են իրականացնել. 1. «Գյումրու թիվ 29 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը եռահարկ է, կառուցված 2005 թվականին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար առկա է արտաքին և ներքին թեքահարթակ: Գոյություն ունի նաև երկու ռեսուրսային սենյակ, որոնք կարիք ունեն վերանորոգման: Կա նաև չօգտագործվող վերելակ: Անհրաժեշտ է կառուցել երկու

	սանհանգույց և մեկ ռեսուրսային սենյակ: Վերջիններս հնարավոր է իրագործել առաջին հարկում: Դպրոցը չունի սպորտի դահլիճ: 2.«Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկանի է, կառուցված 1990-1992 թվականներին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար «Կարիտաս» ընկերության և դպրոցի միջոցների հաշվին կառուցվել է թեքահարթակ և մեկ սանհանգույց: Հաշվի առնելով աշակերտների մեծ թվաքանակը, առաջարկում ենք կառուցել ևս երկու սանհանգույց և մեկ ռեսուրսային սենյակ: Վերոնշյալ սենյակների համար կան համապատասխան տարածքներ: 3.«Գյումրու թիվ 15 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը 2-3 հարկանի է, կառուցված է 1967 թվականին: Շենքը վերանորոգվել է 1989 թվականին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար «Կարիտաս» ընկերության և դպրոցի միջոցների հաշվին կառուցվել է արտաքին թեքահարթակ և մեկ սանհանգույց: Վերջինս օգտագործվում է միայն աղջիկների կողմից: Նաև վերանորոգվել է մեկ ռեսուրսային սենյակ: Հաշվի առնելով աշակերտների թվաքանակը, առաջարկում ենք կառուցել ևս մեկ սանհանգույց և մեկ ռեսուրսային սենյակ: Վերոնշյալ սենյակների համար կան համապատասխան տարածքներ: 4.«Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկանի է, կառուցված է 2004 թվականին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար հարկավոր է կառուցել արտաքին թեքահարթակ /h-60 սմ/, իսկ մեկ սանհանգույց և մեկ դասասենյակ /ռեսուրսային/ անհրաժեշտ է ամբողջությանբ վերանորոգել /դռներ, պատուհաններ, հատակ և այլն/: 5.«Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը եռահարկ է, կառուցված 2001 թվականին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար առաջարկում ենք կառուցել նոր սանհանգույց, քանի որ գոյություն ունեցողը հարմար չէ և տրամադրվող ռեսուրսային սենյակը կոսմետիկ վերանորոգել: Անհրաժեշտ է կառուցել արտաքին թեքահարթակ /h-15 սմ/: Դպրոցի չունի սպորտ դահլիճ, իսկ տանիքը վերանորոգման կարիք ունի: 6.«Գյումրու թիվ 18 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկանի է, կառուցված 2000 թվականին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար հարկավոր է գոյություն ունեցողը սանհանգույցն ամբողջովին վերանորոգել ըստ նորմերի, լայնացնել դռան բացվածքը: Տրամադրվող ռեսուրսային սենյակը պետք է վերանորոգել, պատուհանը և դուռը փոխել: Անհրաժեշտ է կառուցել արտաքին թեքահարթակ /h-90 սմ/: 7.«Գյումրու թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկանի է, կառուցված 1964 թվականին: Ուժեղացվել է 1997 թվականին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար առկա են արտաքին թեքահարթակը և ամբողջովին վերանորոգված երկու սանհանգույցները: Սակայն թեքահարթակի թեքությունը կարիք ունի համապատասխանեցնելու նորմերին, իսկ սանհանգույցները պետք է համալրվեն անհրաժեշտ պարագաներով և դռները համապատասխանեցնեն նորմերին: Ռեսուրսային սենյակ: Ռեսուրսային նպատակով տրամադրվող սենյակը պետք է կոսմետիկ վերանորոգել, փոխել հատակը և դուռը: 8.«Գյումրու թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երեք մասնաշենքից է կազմված, կառուցված է 1969 թվականին: Ուժեղացվել է 1990 թվականին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար անհրաժեշտ է կառուցել արտաքին թեքահարթակը /h-50սմ/, սանհանգույց և ռեսուրսային սենյակ: Շենքի 1-ին հարկում այդ նպատակով տրամադրվող տարածքները պետք է ամբողջովին վերանորոգել, փոխել պատուհանները և դռները: 9.«Գյումրու թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Սենյակը (10,1x6.0 S=61,1քմ) վերանորոգված է անհրաժեշտ է նոր դուռ տեղադրել և նորոգել վնասված մասերը մոտ 10քմ: Սանհանգույցում (10,0քմ) պետք է նոր դուռ տեղադրել և ամբողջությամ վերանորոգել: Թեքահարդակ կառուցելու կարիք չկա , անհրաժեշտ է բազալտապատել, դռան շեմը կտրել, բռնածող տեղադրել: 10. «Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Վերանորգվող մակերեսը 180 քմ: Նախատեսվում է վերանորոգել երկրորդ հարկի մի մասը և սանհանգույցները: Երկրորդ հարկում առկա են մեկ սանհանգույց որոնք պետք է ամբողությամբ վերանորոգվի: Երեխաների մուտքը երկրորդ հարկ նախատեսվում է գոյություն ունեցող կամրջակով , որը անհրաժեշտ է վերանորոգել և ամրացնել: 11. «Գյումրու թիվ 38 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկանի է, մեկ մասնաշենքով: Կառուցված է 2002 թվականին: Մասնակի վերանորոգված է: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար անհրաժեշտ է կառուցել սանհանգույց, ռեսուրսային սենյակ, իսկ գոյություն ունեցող արտաքին թեքահարթակը պետք սալիկապատել և ճշտել թեքությունը: Շենքի 1-ին հարկում ներառական նպատակով տրամադրվող դասասենյակը պետք է ամբողջովին վերանորոգել, իսկ գործող սանհանգույցի պատերի ձևափոխմամբ ստանալ անհրաժեշտ սանհանգույց:

	12. «Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկանի է, կազմված երկու մասնաշենքից: Կառուցված է 2000-2007 թվականներին: Մասնակի վերանորոգված է: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար անհրաժեշտ է կառուցել սանհանգույց, ռեսուրսային սենյակ և արտաքին թեքահարթակ /h-80սմ/: Շենքի 1-ին հարկում ներառական նպատակով տրամադրվող դասասենյակը պետք է ամբողջովին վերանորոգել, իսկ անհրաժեշտ սանհանգույց ստանալու համար պետք է գործող սանհանգույցի պատերը ձևափոխել և միջանցքից նոր դուռ բացել: 13. «Մարալիկի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը կազմված է երեք մասնաշենքից, կառուցված 1969 թվականին: Ուժեղացվել է 2004 թվականին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար անհրաժեշտ է արտաքին թեքահարթակ /30-սմ/, ռեսուրսային դասասենյակ և սանհանգույցներ: Ելնելով շենքի հնարավորությունից Ռեսուրսային նպատակով տրամադրվող սենյակը հնարավոր է կառուցել 1-ին հարկի ռեկրեացիայում և ամբողջությամբ վերանորոգել: Իսկ տնտեսական սենյակը վերափոխել և հարմարեցնել որպես սանհանգույց: 14. «Շիրակավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկանի է, երեք մասնաշենքով: Կառուցված է 1981 թվականին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար դպրոցի շենքը հարմարեցված չէ: Անհրաժեշտ է կառուցել արտաքին թեքահարթակը /h-90սմ/, սանհանգույց և մեկ ռեսուրսային սենյակ: Շենքի 1-ին հարկում այդ նպատակով տրամադրվող սանհանգույցը կարելի է ձևափոխել ըստ անհրաժեշտ նորմերի, իսկ ռեսուրսային սենյակը հնարավոր է տեղակայել 1-ին հարկի բավական մեծ ռեկրեացիոն տարածքում: 15. «Բավրայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դասասենյակը (3,0x6,0 S=18,0 քմ) նախատեսվում է միջանցքի մի մասում, որը պետք է պատով առանձնացնել և ամբողջությամբ վերանորոգել: Սանհանգույցում (7,2քմ) պետք է նոր դուռ տեղադրել և ամբողջությամբ վերանորոգել: Թեքահարթակ կառուցելու կարիք կա, դռան շեմը պետք է կտրել: 16. «Լեռնակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի նոր մասնաշենքը երկհարկ է, միաբլոկ: Ունի լոկալ ջեռուցում: Կառուցված է 2003-2006 թվականին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար դպրոցի շենքը մասամբ հարմարեցված է: Ունի արտաքին թեքահարթակ, որը կարիք ունի որոշ շտկումների: Շենքում հնարավոր է կազմակերպել սանհանգույցը և ռեսուրսային սենյակը: Սանհանգույցը կստացվի գոյություն ունեցող սանհանգույցում նոր պատ շարելով, իսկ ռեսուրսային սենյակը կկազմակերպվի ճաշարանի մի մասն անջատելով, բացելով նոր դուռ: 17. «Բյուրակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկանի է: Կառուցված է 70-ական թվականներին: Ուժեղացված է 1998 թվականին: Դպրոցը հարմարեցված է մանկապարտեզի շենքում: Մասնակի նորոգված է:Շենքը հիքերից խոնավանում է: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար շենքը հարմարեցված չէ: Անհրաժեշտ է կառուցել արտաքին թեքահարթակ, սանհանգույց և մեկ ռեսուրսային սենյակ: Շենքի 1-ին հարկում այդ նպատակով հնարավոր է կազմակերպել սանհանգույցը և ռեսուրսային սենյակը: Թեքահարթակը կարելի է իրականացնել մուտքի աջ կամ ձախ կողմում/h-60սմ/, սանհանգույցը կստացվի գոյություն ունեցող սանհանգույցը ձևափոխելով, իսկ ռեսուրսային սենյակը պետք է կոսմետիկ նորոգել: 18. «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկ է, մեկ մասնաշենքից: Կառուցված է 2003 թվականին: Մասամբ վերանորոգված է: Ջեռուցվում է: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար դպրոցի շենքը հարմարեցված է մասամբ: Մուտքի աջ և ձախ կողմերում առկա են թեքահարթակներ, որոնք կարիք ունեն նորոգման: Անհրաժեշտ է կառուցել մեկ սանհանգույց և մեկ ռեսուրսային սենյակ: Վերջիններս հնարավոր է կազմակերպել շենքի 1-ին հարկում: Սանհանգույցը կկազմակերպվի գոյություն ունեցող 4 սանհանգույցներից մեկի ձևափոխումով, իսկ ռեսուրսային սենյակը պետք է կազմակերպել միջանցքում /ռեկրեացիայում/ լրացուցիչ պատ շարելով: 19. «Կամոյի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկանի է: Կառուցված է 70-ական թվականներին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար շենքը հարմարեցված չէ: միջանցքից անհրաժեշտ է պատով առանձնացնել սենյակ և ամբողջովին վերանորոգել: սանհանգույցը պետք է վերանորոգել և հարմարեցնել: 20. «Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում՝ Դպրոցի շենքը երկհարկանի է: Կառուցված է 70-ական թվականներին: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար շենքը հարմարեցված չէ: միջանցքից անհրաժեշտ է պատով առանձնացնել սենյակ և ամբողջովին վերանորոգել: Սանհանգույցը պետք է վերանորոգել և հարմարեցնել:

	21. «Արթիկի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ բաղկացած է երեք մասնաշենքից: Մեկ մասնաշենքի առաջին հարկը ամբողջությամբ անհրաժեշտ է վերանորոգել և կից սանհանգույցը նույնպես վերանորոգման կարիք ունի:
Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Հիմնավորում՝** - ՀՀ կառ.04.07.2019 թ «ՀՀ 2019թ պետական բյուջեում և ՀՀ կառ.2018 թ դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որ.մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին> թիվ 877-Ն որոշում **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր (ելակետային տվյալներ) ՝** - նախագծային առաջադրանք, - չափագրություններ, **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** - ՀՀ կառավարության 19.03.2015 թ. թիվ 596-Ն որ. «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին», - ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի «ՀՀՇՆ 30-01-2014 <«Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N263-Ն հրաման, - ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001 թ N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին», ՀՀ քաղշին նախարարի հրաման 24.03.2014 թ թիվ 87-Ն հրաման, - ՍՆիՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և շինություններ (այդ թվում <Актуализированная редакция СНиП 2.08.02-89>)» - ՀՀ կառավարության 13.12.2007 թ <«ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001 թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1490-Ն որոշում, - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018 թ <Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» թիվ 43-Ա հրաման, - ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին», - ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»:
Նախագծման փուլերը	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017 թ N 128-Ն հրամանի համաձայն. Նախագծային աշխատանքների իրականացում «**Աշխատանքային Նախագիծ**» 1 (մեկ) փուլով
Նախագծի կազմը	**«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»** **<u>Նախագծի լրակազմում նախատեսվող (մշակվող) փաստաթղթեր</u>** 1. Ընդհանուր բացատրագիր 2. Ճարտարապետաշինարարական մաս (գծագրական և տեքստային նյութեր) - Ճարտարապետական լուծումներ 3. Ինժեներական (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր)՝ - էլմատակարարման, կոյուղու, ջրամատակարարման և այլն ***(նախագծողի կողմից անհրաժեշտ համարվող այլ համակարգերի***

	նախագծում) 4. Շինարարական աշխատանքների նախահաշիվ 5. Շինարարության կազմակերպման նախագիծ 6. Հաշմանդամների համար օբյեկտի մատչելիությունն ապահովող միջոցառումներ
Այլ պահանջներ	**Համաձայնեցումներ** Նախագծի համաձայնեցում ոլորտի գլխավոր կարգադրիչ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ, ինչպես նաև վերոնշյալ կազմակերպությունների հետ: **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** - նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ - նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները: **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն: **ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ** - Բոլոր վերոնշյալ կրթական օբյեկտների ծավալաթերթ-նախահաշիվները, ինչպես նաև ամփոփ նախահաշիվները ներկայացնել առանձին-առանձին: - Ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

«ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» 1992թ. դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների արտոնություններից օգտվելու մասին» ՀՀ օրենքով և ՀՀ պետական եկամուտների նախարարի 15.09.2000թ. N02/1054 հրամանով հաստատված հրահանգով կիրառվում է ԱԱՀ-ից ազատման արտոնությունը, որով գործում է ավելացված արժեքի հարկից ազատման պայմանը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

----------Վ. Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

----------Է. Դավթյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«19» նոյեմբեր 2021 թ. կնքված
ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-21/52 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/15	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում											3700000	3700000	3700000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

----------Վ. Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

----------Է. Դավթյան
/ստորագրություն/ Կ.Տ